

## Ֆրանսիայի Բուրգետ-Դու-Լաք քաղաքի քաղաքապետ Էդվարդ Սիմոնյանը՝ Վայոց ձորի մարզպետարանում

23.10.2012



Երեկ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը հյուրընկալել է Հայաստանում Ռեոն Ալպեր ապակենտրոնացված համագործակցության ծրագրերի ներկայացուցիչներին և Ֆրանսիայի Բուրգետ-Դու -Լաք քաղաքի քաղաքապետ Էդվարդ Սիմոնյանին:

Մարզպետի մոտ տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում: Հանդիպման ընթացքում խոսվել է մարզի գինեգործության և խաղողագործության բնագավառի ավանդական մշակույթի մասին, քննարկվել են Վայոց ձորում գինեգործության և խաղողագործության զարգացման ծրագրեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նշված բնագավառում իրականացնել ծրագրեր, ֆրանսիացի գործընկերների փորձի ներդրմամբ: